ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/56

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2019թ. թիվ 26/3407-19 գրությամբ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին (այսուհետ՝ ԱՁ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 22.02.2019թ. թիվ 01/61-3096 գրության հիման վրա, 04.03.2019թ. Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 22.02.2019թ. թիվ 01/61-3096 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2019թ. թիվ 2 որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 12.000 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն քաղաքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 05.03.2019թ. գրությամբ դիմել է Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2019թ. թիվ 26/3407-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել ԱՁ-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն:

4. ՍՑ-ԷՍ-2019/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2019թ. թիվ 26/3407-19 գրությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.02.2019թ. թիվ 01/61-3096 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.02.2019թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 և 18.02.2019թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 08.02.2019թ. դրությամբ ԱՁ-ի՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.02.2019թ. Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին տրված թիվ 463 տեղեկանքը, Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.02.2019թ. տրված եզրակացությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, (այսուհետ նաև՝ Աճուրդ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն:

Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 799.000 ՀՀ դրամ:

Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 12.02.2019թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2.1 կետով որոշել է Աճուրդի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին:

- 3.1 կետով որոշել է հարցում ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.02.2019թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 12.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 18.02.2019թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 1.2 կետով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու

մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետը, որոշել է Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է 08.02.2019թ. դրությամբ ԱՁ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ ԱՁ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.02.2019թ. Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին տրված թիվ 463 տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը irina.eghiazaryan@yerevan.am հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության

արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.02.2019թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (08.02.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 12.000 ՀՀ դրամ:

- Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (08.02.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել ԱՁ-ի իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ ԱՁ-ն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2019թ. թիվ 26/3407-19 գրությամբ Մեսրոպ Խլղաթյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**